Հաստատում եմ՝

Տնօրեն_____Հ.Խոցանյան

«Գյումրու № 8 միջնակարգ դպրոց »ՊՈԱԿ

Լաբորանտի տարեկան աշխատանքային պլան

2023-2024 ուստարի

Լաբորանտ՝_____Ս.Շահբազյան

Աշխատանքի նկարագիր

1. Նախապատրաստել և ապահովել կենսաբանության առարկայական ծրագրով նախատեսված լաբորատոր աշխատանքները
2. Լաբորատոր փորձից առաջ սովորողներին պարզաբանել տվյալ լաբորատոր աշխատանքի անվտանգության կանոնները և դասավանդող ուսուցչի հետ համատեղ ապահովել դրանց կատարումը:
3. Աշխատանք տանել լաբորատորիայի նյութերի և սարքավորումների հաշվառման, սահմանված կարգով պահպանման, ժամկետանց նյութերի և սարքավորումների ցանկի՝ հաստատության ղեկավարությանը դուրս գրման ներկայացնելու (դասավանդող ուսուցչի գրավոր համաձայնությամբ) ուղղությամբ:
4. Լաբորատոր փորձերից հետո ապահովել չօգտագործված նյութերի, գործիքների և սարքավորումների պահեստավորումը, անձամբ իրականացնել թափոնների անվտանգ վնասազերծումը, ոչնչացումը:
5. Պատշաճ կերպով իրականացնել օրենսդրությամբ սահմանված լաբորանտի վրա դրված պարտականությունները:
6. Աջակցություն դպրոցում գիտական նախագծերի փորձարարական իրականացմանը:
7. Անհրաժեշտության դեպքում աշակերտին առաջին բուժօգնություն ցուցաբերելու կարողություն,
8. Գործնական աշխատանքի իրականացմանն անհրաժեշտ նյութերի և տվյալների կրկնօրինակում, տպում, նիշքերի պատրաստում, ձայնագրությունների կատարում և այլն,